(ազնուական) կոչմանը, իսկ տուգանքը ոչ երբէք։ Դպրոցը ընդդիմացաւ աղաղակելով. «ի բաց տուգանքը, կեցցէ ձաղկածեծը»։ Սա մի նշանաւոր ապստամբութիւն էր, և մենք, հին կարտէզեաններս (լուսակաց միայնակեացներս) մինչև այժմ դեռ յիշումենք այն խռովութիւնը։ Ձաղկածեծը հանդիսաւոր վերականգնեցաւ։ Միւս օր առաւօտը, դրամական տուգանքը վերցնելուց յետոյ, դասարան մտնելիս տեսանք ձաղկերի հոչակաւոր անտառը և երկու ժամ գործածվեցաւ նոցա ի գործ դնելու համար»։

Շատ դպրոցներում շատ անգամ տալիս են ապտակներ, բայց աւելի յաճախ հարուածներ են տալիս ձեռին։ Ուսուցիչը բարակ քանոնը ձեռին պատուիրում աշակերտին մեկնել ձեռը։ Մանուկը ստանում հարուած և իսկոյն մեկնում միւս ձեռը։ Ձափաղանց յաջողակ մեկնում նա հարուածների համար նախ մին, և յետոյ միւս ձեռը, առանց նշան անգամ ցոյց տալու թէ կամենում ձեռը յետ քաշել և գոնէ մի բոպէ ուշացնել պատիժը։ Երևում, որ աշակերտներն իւրեանց հպարտութիւն և պարծանք են համարում պատիժը կրել գործած յանցանքի համար առանց աղաղակելու կամ ձայն հանելու։ Թէպէտև նոցա աչքերը թրջվումեն և արտասուքները ցայտումեն նոցա կամքի հակառակ։

(Կշարունակվի) ՃԷՖ. Ե. ԴՈՍ. ՍՂ. Ա. Զ.

ՅՈՒՅԱԿ

ՄԴԷՆ ԵՒ ՅԱԽՈՍՈՑ ԱՐՔԷՈՆՑ ՄԱՐԴՈՒԷՐՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻ ՅԱՆՈՒՆ ԱՐԲՈՑ ԹՈՒՔՄԱՆԸՆՑ ՎԵՐԱԼ Է ԱՅՆ ՄԱՐԴԻ 1879 ՄԻ ՅԱՅ ՄԱՐԴԻ 1880 ՄԻ։

ՄՈՒՏՔ.	Ր.	Կ.	ԾԱԽՔ.	Ր.	Կ.
Ընկերութեան դրամագլուխ տոկոսաբեր . . .	3300		Երից ուսուցչաց եւ մի վարժուհոյ վարձն . . .	952	83
Ապառիկ ընկերութեան .	328		Վաւելեաց, ի պէտս դպրոցի ձեռագործութեան, դրեանց չը-քաւոր երեխայից, Մշակ եւ Մերոյ լրագրաց, եւ այլ մանր մասնաբար պիտոյից . . .	130	30
Ապառիկ ի կալուածոց ուսումնարանական կրպակացն .	48		Վարձք ծառայից . .	96	36
Ի նախկին հոդաբարձուէ .	362	22	Նորոգ նստարանաց եւ գրասեղանաց շինութեան . .	42	15
Յարդեանց մասանց տան ս. Աստուածածին եկեղեցւոյն .	199	18	Շինութիւն օրիորդաց դպրոցի եւ երից նորոգ կրպակաց, եւ նորոգութիւն միւսոց . .	995	92
Ի թոշակագրամոց .	228	75	Վարձ բնակութեան նորաւարժ երեխայից . . .	10	
Ի կալուածոց եկամուտք .	336	30		2227	56
Ի կապալառուէ մամավաճառութեան . . .	300		Մնայ առ մին մարտի 1880 ամի տոկոսաբեր դրամագլուխ .	3863	29
Ի դրամագլխոց տոկոսիք .	485				
Յեկեղեցական գումարաց սրբոյն Աստուածածնի յօգնութիւն շինութեան օրիորդաց դպրոցին	200				
Ի պատկատեարց նուէրք .	303	40			
	6090	85			

Թիւ հաստատուն անդամոց .	
Թիւ ժամանակաւոր անդամոց առաջին կարգի . . .	11
Երկրորդ կարգի . .	20
Թիւ փոխնակաւոր անդամոց առաջի կարգի . . .	16
Երկրորդ կարգի . .	17
Երրորդ կարգի . .	23
	23

Թիւ աշակերտաց երկուց դպրոցաց . . .	165
Թիւ աշակերտուհեաց . . .	63
Թիւ ուսուցչաց . .	4

Ն-ԽՈՓՈՀ Յ-ՐՈՒՆ Մ-ՈՒՆԵՆ
Գ-ՆՅ-ԳՈՀ ՊՕՂՈՍ Դ-ԼՎ-ԴՈՎ
Հ-ՓՈՐՅՈՒ Մ-ԴՐԷՍ Ա-ՓՐԻԷՆ
Խ-Լ-ԴՈՐ Բ-ՈՒԴՈ-ՎԵՆ
ՏԷՈՒԼ Կ-ՐՈՒՊԷ ՏԷՐ Ի-ՈՀ-ՍԷՆ
Գ-ՐԴՈՒՂ-Ր Հ-ՅՐՈՒՊԷ Խ-Լ-ԴՐԷՆ

ՈՉ ՈՔ.

Նայեցէք, մարդիկ, հիւանդ թալկած կին,
Ցմահ չարչարված իւր զաւակներով,
Անցնում կոծով ողբով լալագին
Մեծամեծների պալատի մօտով.
Տառապեալ հիւանդ կընոջ յետևից
Վազումն կրծող շներ խմբովին,
Զուր է կամենում մայրը նոցանից
Պաշտպանել սիրած իւր զաւակներին,
Նա հեռացնելու կատաղի շներ
Զունի ոչինչ ոյժ, մինչդեռ անտարբեր
Լուսամուտներից բազմաթիւ գլուխներ
Նայումեն կընոջ թշուառ և անտէր.
Շնչասպառ գրութեան չէ գթում ոչ ոք,
Դեռ գրգռումեն շներին մարդիկ.—
Քո տագնապ, տանջանք այսպէս չեն արդեօք,
Իմ բազմաչարչար զոհված հայրենիք . . .

Իշխան Բագրատունի.

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Վեհափառ Կաթողիկոսն Կալկաթայի արժանայիշատակ Սողոմոն Պապէի կտակի և կտակաւանդ դրամների մասին հետևեալ տեսութիւն բարեհաճեց անել իւր Հայրապետական Կոնդակով, որի պատճէնը կդնենք ահա այստեղ.